Հաշվետվություն

2017թ. հունիսի 5-ից 7-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

   Դավիթ Տոնոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (պատվիրակության կազմը կցվում է)

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ռուսաստանի Դաշնություն, 2017թ. հունիսի 5-ից 7-ը

4. **Հրավիրող կողմը**

   ՌԴ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարար Վլադիմիր Պուչկով

5. **Գործուղման նպատակը**

   Երկկողմ հարաբերությունների խորացման և համագործակցության ընդլայնման, Հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) վերազինման և փրկարարական համատեղ ուժերի տեխնիկական հզորացման վերաբերյալ հարցերի քննարկում, մասնակցություն «Համալիր անվտանգություն-2017» անվտանգության ապահովման միջոցների միջազգային 10-րդ սրահ - ցուցահանդեսին:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա կատարած աշխատանքային այցի շրջանակներում 2017թ. հունիսի 5-ին հանդիպում եմ ունեցել *ՌԴ ԱԻ նախարար Վլադիմիր Պուչկովի հետ*: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- երկու երկրների միջև համագործակցության խորացման և ընդլայնման հարցերը,
- արտակարգ իրավիճակների, աղետների կանխարգելմանն ու չեզոքացմանն ուղղված հիմնախնդիրները,
- փրկարարների մասնագիտական վերապատրաստման հնարավորությունները,
- արտակարգ իրավիճակներին արձագանքման միասնական մոտեցման մշակման կարևորությունը,
- աղետներից բնակչության պաշտպանության ոլորտում տեղեկատվության և տեխնոլոգիաների օպերատիվ փոխանակման կարևորությունը,
- Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնին վերաբերող հարցեր՝ երկուստեք կարևորելով Կենտրոնի ստեղծման դերը, որն արտակարգ իրավիճակների ոլորտում հայ-ռուսական համագործակցության կարևորագույն նվաճումներից է: Կենտրոնը միակն է տարածաշրջանում և մասշտաբային աղետների դեպքում կարող է օգնություն ցուցաբերել տարածաշրջանային մակարդակով,
- Կենտրոնի գործարկման 2-րդ փուլի ընթացքի վերաբերյալ հարցեր, մասնավորապես՝ Կենտրոնի հագեցումը ժամանակակից փրկարարական տեխնիկայով, որն անհրաժեշտ է Կենտրոնի անխափան գործունեության ապահովման համար: Նախատեսվում է տեխնիկապես հագեցնել նաև Կենտրոնի իրավիճակային դահլիճը:

Մոսկվա կատարած այցի շրջանակում հանդիպում եմ ունեցել նաև *ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի հետ:* Հանդիպմանը ներկա է եղել նաև ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեմերիկովը:
Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- ՀԱՊԿ անդամ-պետությունների փոխգործակցության հետագա զարգացման հեռանկարներն արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտներում,
- դիտարկվել է ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների արձագանքման միացյալ տեղեկատվական-ծրագրային համակարգի գործարկման հարցը, որը ստեղծված է ճգնաժամային իրավիճակներում պետական կառավարման մարմինների միջև տեղեկությունների փոխանակման և համագործակցության երկկողմ կանոնակարգերի հիման վրա,
- ընդգծվել է խոշոր արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ընթացքում օգնության հավաքական արձագանքման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը,
- դիտարկվել է նաև ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի կազմում ընդգրկված ՀՀ ԱԻՆ ուժերի և միջոցների պատրաստման խնդիրները:

Աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել եմ նաև *Ռուսաստանի Դաշնության պետական ռեզերվների դաշնային գործակալության ղեկավար Դմիտրի Գոգինի հետ*: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական ռեզերվների գործակալության և Ռոսռեզերվի համագործակցության ընդլայնման վերաբերյալ խնդիրներ,
- թեմաներ, որոնք հրապարակման ենթակա չեն:

Այցի շրջանակներում Նոգինսկում մասնակցել եմ *«Համալիր անվտանգություն-2017» անվտանգության ապահովման միջոցների միջազգային 10-րդ սրահ-ցուցահանդեսին*, որին մասնակցում էին 100-ից ավել երկրների ներկայացուցիչներ: Ցուցահանդեսի ժամանակ ներկայացվեցին անվտանգության ապահովման ոլորտում ոչ միայն նորարարական մոտեցումները, այլ նաև առաջավոր փորձը, որն էլ ապագայում կխթանի նորարարական ծրագրերի ներդրմանը:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝

- Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի 2017-2018թթ. համար նախատեսված գործողությունների պլանի հաստատում, որը կապահովի Կենտրոնի զարգացումն ու ֆունկցիոնալ անխափանությունը,
- Կենտրոնում պարբերաբար դասընթացներ և վերապատրաստումներ կանցկացնեն ՌԴ ԱԻՆ կենտրոնական փրկարարական ջոկատի (“Центроспас”) մասնագետները,
- ՀԱՊԿ անդամ-պետությունների ԱԻ համակարգող խորհրդի առաջիկա նիստում քննարկել կազմակերպության անդամ երկրների արտակարգ իրավիճակներին արձագանքման կանոնակարգի իրականացման հարցը, որը հաստատվել է 2011թ. դեկտեմբերի 20-ին՝ ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի որոշմամբ,
- այցի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակագ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարության միջև համագործակցության սկտիվացման» վերաբերյալ Հուշագիր:

8. Առաջարկությունները

Հանդիպումների ընթացքում հանդես եմ եկել մի շարք առաջարկություններով՝

- մշակել արտակարգ իրավիճակների ոլորտում հայ-ռուսական համագործակցության 2018-2019 թվականների ծրագիրը,

- համատեղ մշակել և իրականացնել տարերային և տեխնածին աղետների կանխման և դրանց հետևանքների վերացման բնագավառի նախագծեր, այդ թվում՝ երրորդ երկրներին առնչվող,
- զարգացնել ուղիղ կապեր ՀՀ ԱԻՆ և ՌԴ ԱԻՆ տեղեկատվական կառավարման կենտրոնների և օպերատիվ ծառայությունների միջև,
- կանոնավոր կերպով անցկացնել հանդիպումներ արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքների պաշտպանության, կադրերի պատրաստման գործում:

9. Գործուղվողը

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

09.06.2017թ.